ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1094-Ա « 21 » մարտի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ
29-Ի Հ.5464-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Զաքար Սայադյանի դիմումը՝ Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 29-ի հ.5464-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված գույքի առանձին որակական, քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների /սահմանափակումների/ վերաբերյալ հ.հ. ԱՏ-18122023-01-0734 և ԱՏ-06042023-01-0472 տեղեկանքները, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 20.02.2024թ. Դ-17153-24 եզրակացությունը.

1. Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 29-ի «Երևան քաղաքի Ներքին Չարբախի 5-րդ փողոցի 1-ին նրբանցքի հ.1 և 12-րդ փողոցի 4-րդ նրբանցքի հ.6 հասցեներում գտնվող տնամերձ, ինչպես նաև գյուղատնտեսական նպատակով հատկացված հողամասերի հողհատկացման հիմքերը վերականգնելու և 800.0քմ մակերեսով տնամերձ հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ Զաքար Սայադյանի սեփականության իրավունքը ձևակերպելու մասին» հ.5464-Ա որոշման նախաբանում և 1-ին կետում՝ «370.0քմ» և «2400.0քմ» բառերը փոխարինել համապատասխանաբար՝ «358.10քմ» և «2362.0քմ» բառերով:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ